ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-99)

Բաժնի պետը՝

ա) կազմակերպում է քաղաքապետին չվերապահված վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը.

բ) ապահովում է վարչական շրջանի ղեկավարի տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

գ) իրականացնում է Երևանի սեփականություն համարվող վարչական շրջանի ղեկավարի տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների հաշվառումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

դ) ձեռնարկում է համապատասխան միջոցներ Երևան համայնքի սեփականությունը համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման և ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների անխափան շահագործումն ապահովելու համար.

ե) իրականացնում է ոչ քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, բնակավայրերի բարեկարգման, կանաչապատման, աղբահանության աշխատանքների կազմակերպումը.

զ) իրականացնում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով ու այլ իրավական ակտերով համայնքի ղեկավարին քաղաքաշինության ոլորտում վերապահված այլ լիազորությունները, որոնք սույն օրենքով վերապահված չեն քաղաքապետին.

է) իրականացնում է ինքնակամ շինարարության կանխարգելման և կասեցման համար անհրաժեշտ աշխատանքները և ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

ը) օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով նախապատրաստում է համատիրությունների հիմնադիր ժողովներ և աջակցում է դրանց անցկացմանը, ինչպես նաև օրենքով սահմանված բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձևավորմանը, ապահովում է վարչական շրջանի մասնակցությունն այդ շենքերի սպասարկմանը՝ իր սեփականությունը համարվող բնակարանների քանակին համապատասխան.

թ) կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանման աշխատանքները, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից պարտադիր բարեկարգման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից պարտադիր նորմերի կատարման նկատմամբ.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Բաժնի պետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ) ունի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի և բաժնի կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի :

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թվականի հունիսի 21-ը, ժամը 10:00:
Դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515132):
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն